



Ծնողներ և ուսուցիչներ

Գիտե՞ք, որ

- Ծնողների 95%-ը գտնում է, որ անհրաժեշտ է երեխաների հետ խոսել համացանցային անվտանգության ռիսկերի և վարքագծի մասին, սակայն միայն 65%-ն է երեխաների հետ վարել “Համացանցի մասին խոսակցությունը”:ⁱ
- Հարցմանը մասնակցած վաղ պատանեկության տարիքում գտնվողների 68%-ն ասում է, որ ներբեռնել է համակարգչային կամ այլ ծրագիր՝ առանց ծնողների թույլտվության:ⁱⁱ
- Վաղ պատանեկության տարիքում գտնվող հինգ ամերիկացիներից մեկը, որը պարբերաբար օգտվում է Համացանցից, ասում է, որ ստացել է սեռական բնույթի անցանկալի առաջարկներ Համացանցի միջոցով և նրանց միայն 25% -ն է այդ մասին հայտնել իր ծնողին կամ չափահասի:ⁱⁱⁱ

Պարզ խորհուրդներ երեխաներին պաշտպանելու համար

- Երեխաների համար ստեղծեք բաց և ազնիվ միջավայր:
- Կանոնավոր կերպով երեխաների հետ զրույցներ վարեք համացանցային անվտանգության մասին:
- Պատանիների հետ զրուցելիս շեշտեք արժանահավատության գաղափարը. ամեն ինչ չէ, որ նրանք տեսնում են Համացանցում իրական է. այնտեղ մարդիկ կարող է և չլինեն այն, ինչ ներկայանում են:
- Դիտեք վարքագծի փոփոխությունները. եթե ձեր երեխան հանկարծ խուսափում է համակարգչից, հնարավոր է, որ առցանց նա ենթարկվում է հետապնդման:
- Ուսումնասիրեք ձեր երեխաների այցելած կայքերի անվտանգության և գաղտնիության կարգավորումները: Այդ կարգավորումները հաճախ թարմացվում են, հետևաբար եղեք զգոն:

Ինչ ռեսուրսներից կարող եք օգտվել

- *Cybersecurity Awareness Volunteer Education Program (C-SAVE) Կիրբեռանվտանգության իրազեկման կամավորական կրթական ծրագիրը (C-SAVE)*
Կիրբեռանվտանգության ազգային դաշինքը մշակել է C-SAVE ծրագիրը, որից կարող եք օգտվել staysafeonline.org/in-the-classroom/c-save հասցեով: Կան տարիքային ռեսուրսներ, որոնք թույլ են տալիս ինտերնետային անվտանգությունը քննարկել դասարանում կամ



ուսանողների հետ:

- *OnguardOnline.gov* Առևտրի դաշնային հանձնաժողովի կողմից վարվող այս կայքը մեկ պատուհանի սկզբունքով առցանց անվտանգության ռեսուրսներ է առաջարկում ծնողներին, ուսուցիչներին, երեխաներին և այլ անձանց:
- *Cybertipline.com* Կոնգրեսի նախաձեռնած CyberTipline-ը կազմում է Անհետացած և շահագործման ենթարկված երեխաների ազգային կենտրոնի (NCMEC) բաղադրիչը և ընդունում երեխաների մասին հաղորդումներ 24 ժամ շարունակ շաբաթվա յոթ օրերի ընթացքում: Կարելի է ներկայացնել առցանց հաղորդում կամ զանգահարել 1-800-843-5678.
- *Staysafeonline.org* Կիրենանվտանգության ազգային դաշինքն առաջարկում է դասընթաց անվտանգության թարմացումների, անվճար հակավիրուսային ծրագրերի, վնասական ծրագրերի հեռացման համակարգչային ծրագրերի հարցում և այլ ծառայություններ:

Կանգնե՛ք, Մտածե՛ք, Միացե՛ք™ համազգային տեղեկատվական արշավի նպատակն է ընդլայնել կիրենվտանգների մասին հանրային իրազեկվածությունը և ուղղորդել ամերիկյան հասարակությունը դեպի առավել ապահով և անվտանգ Համացանցի օգտագործում: Տեղեկատվական արշավի գլխավոր նպատակն է օգնել հասկանալ օրեցօր տարածվող կիրենվտանգները և զինել ձեզ, ձեր ընտանիքը և համայնքը համապատասխան պաշտպանական միջոցներով: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք <http://www.dhs.gov/stopthinkconnect>.

ⁱ <http://www.comcast.com/MediaLibrary/1/1/About/PressRoom/Documents/pdf/InternetSurveyChartsOct2011.pdf>

ⁱⁱ Ibid.

ⁱⁱⁱ Consumer Electronics Products and Services Usage Report, Accenture, March 2009

